

Վրացի պրոֆեսորը գոհ է ՀՊԱՀ և ԱՌԿ իր այցելությունից



Գագա ՆԻԿԱԲԱԶԵ,
ԱՌԿ 5

Վրաստանի պետական գյուղատնտեսական համալսարանի (ՎՊԳՀ) դեպարտամենտի պետ Սուլիկո Կամարաուլին մարտի սկզբին այցելեց Հայաստանի պետական ագրարային համալսարան և Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն: Դոկտ. Կամարաուլիի կարճատև այցելության նպատակը երկու համալսարաններում ընթացող բարեփոխումների համատեքստում ուսումնական պլանների և ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ հայաստանցի իր գործընկերների հետ փորձի ու մտքերի փոխանակությունն էր և հատկապես՝ ԱՌԿ-ի, որպես արևմտյան կրթահամակարգի գործելակերպ որդեգրած կառույցի, ուսումնական պլանի ծիրում առանցքային սկզբունքներին ու մոտեցումներին ծանոթանալը:

Այս առումով դոկտ. Կամարաուլին շահեկան հանդիպումներ ունեցավ ՀՊԱՀ պրոռեկտոր Յուրի Մարմարյանի, ԱՀԿՄԿ հիմնադրամի տնօրեն Դենիել Դանի, կրթական բարեփոխումների գծով ՀՊԱՀ խորհրդական Գլեն Շինի, համալսարանի, այդ թվում՝ ԱՌԿ-ի, դասախոսների ու մասնագետների հետ: Ամշուշտ նա կարևորեց նաև մեզ՝ վրացի ուսանողներին հետ հանդիպումը:



«Ես ձգտում եմ պատրաստել երիտասարդ դասախոսների, ովքեր մոտ ապագայում իրենց վրա կվերցնեն Վրաստանի պետական գյուղատնտեսական համալսարանում կրթության ակադեմիական և գործնական բարձր որակի ապահովման պատասխանատվությունը, - ասաց դոկտ. Կամարաուլին մեզ հետ հանդիպման ժամանակ, - ես մեծապես տպավորված եմ այստեղ իմ տեսածով ու լսածով, այն կրթության մակարդակով, որ դուք ստանում եք»:

ՎՊԳՀ պրոֆեսորն ասաց, որ ներկայումս Վրաստանի բարձրագույն կրթության ամբողջ համակարգում արմատական բարեփոխումներ են տեղի ունենում: Այս առումով, իր հետագա անելիքների համատեքստում նա արժեքավոր համարեց ԱՌԿ-ում ձեռք բերված ամբողջ տեղեկատվությունը: Դոկտ. Կամարաուլին նաև կարևորեց ԱՌԿ-ում վրացի դասախոսների վերապատրաստման և ԱՌԿ-ի դասընթացների հետագա թարգմանության խնդիրը, գործընթաց, որ պարբերաբար իրականացվել է վերջին մեկ-մեկուկես տարվա ընթացքում:

Georgian Professor Pleased with His Visit to ASAU and ATC

By Gaga NIKABADZE
ATC 5

Suliko Kamarauli, a Department Head, Georgian State Agricultural University (GSAU), visited the Armenian State Agrarian University (ASAU) and the ATC late February - early March. Dr. Kamarauli had meetings with the Vice Rector of ASAU, Yuri Marmaryan; Director of ICARE Foundation, Daniel Dunn; ASAU Resident Advisor, Glen Shinn; ASAU faculty members; and of course with the ATC Georgian students.

The goal of Dr. Kamarauli's short visit was to exchange



experience and ideas with his Armenian colleagues on the curriculum and organizational reforms underway in both universities and especially become aware of the core principles and approaches provided by the ATC western-structured curriculum.

"I would like to continue my close collaboration with the ATC," said Dr. Kamarauli during his meeting with the Georgian students, "My intention is to prepare young faculty members who will take over the responsibility of the academic and practical quality of the education suggested by my department of GSAU. I am very impressed with what I saw here in terms of the level of education you obtain here."

He said radical changes are now underway in the overall Georgian system of university education and the information the ATC shared would be of great help in his further efforts. Dr. Kamarauli also attached importance to further translate ATC courses into Georgian and organize more trainings for Georgian faculty in future ○



Ֆերմեր - շուկա կապակցման վերաբերյալ խորհրդածողով Յնդկաստանում

International Conference on Linking Farmers and Markets in India

Վարդան ՈւՌՈՒՏՅԱՆ
ԱՀԿՄԿ փոխտնօրեն
Ֆինանսական վերլուծության դասախոս

By Vardan Urutyun
ICARE Deputy Director Operations
Instructor of Financial Analysis

ԱՅԿՄԿ տնօրեն Դենիել Դանը և ես մարտի 11-15-ը Յնդկաստանի մայրաքաղաք Նյու Դելիում կայացած «Յնդկաստանի գյուղական վայրերում տնտեսական զարգացման խթանմանը նպաստող հիմնական գործելակերպերի որոնում» ֆերմերների և շուկայի կապակցման երրորդ միջազգային խորհրդածողովին ներկայացրինք երկու պատահական «Գնահատման RISE համակարգի ներմուծումը Հայաստանում», որը պատրաստվել է Շվեյցարիայի գյուղատնտեսական քոլեջի հետ համատեղ և «Արտադրողների սեփականությունը կոոպերատիվների դերը կաթնամթերքի մատակարարման շղթայում. վկայությունը Հայաստանից»:



ICARE Director Daniel Dunn and I presented two poster papers at the Third International Conference on Linking Farmers and Markets: Exploring Leading Practices to Foster Economic Growth in Rural India held on March 11-15 in New Delhi, India. The titles of the posters were “Introduction of RISE Assessment Tool into Armenian Agriculture – prepared with colleagues from Swiss College of Agriculture” and “The Role of Producer-Owned Cooperatives in Dairy Supply Chain: Evidence from Armenia”.

The purpose of the conference was to explore innovative approaches and new agribusiness models for linking domestic and international consumer markets with rural entrepreneurs and communities.

The conference provided a forum for discussion and debate of how to best organize agri-food supply chains so that they contribute directly to increasing farm income, rural employment and sustainable agricultural development. An integral part of this process was evaluating the role of private industry in facilitating the establishment of alternative business models, driving technological advances, and catalyzing entrepreneurial innovation within rural communities.

More than 500 delegates from 26 countries attended the

խորհրդածողովի նպատակն էր ինովացիոն մոտեցումների և ագրոբիզնեսի զարգացման նոր մոդելների որոնումը՝ հայրենական և միջազգային սպառողական շուկաները գյուղական ձեռնարկատերերի ու համայնքների հետ կապակցելու նպատակով:

Խորհրդածողովում տեղի ունեցած քննարկումներն ու բանավեճերը նվիրված էին պարենամթերքի մատակարարման շղթայի կազմակերպմանը՝ հաշվի առնելով ֆերմերի եկամուտների ավելացման, գյուղական վայրերում զբաղվածության և գյուղատնտեսության զարգացման խնդիրները: Այս գործընթացի բաղկացուցիչ մասն է կազմում այլընտրանքային բիզնեսի մոդելների գործարկմամբ մասնավոր արդյունաբերության դերի գնահատումը, տեխնոլոգիական առաջընթացի ուղղորդումը և գյուղական համայնքներում ձեռնարկատիրական ինովացիոն գործընթացների իրականացումը:

Քսանվեց երկրի ավելի քան 500 պատվիրակներ էին մասնակցում խորհրդածողովին, ովքեր ագրոպարենային ոլորտի պետական ու մասնավոր ընկերությունների ներկայացուցիչներ էին, ագրոբիզնեսի մատակարարման շղթայի տնտեսավարողներ, միջազգային զարգացման ոլորտում գործող կազմակերպությունների (ՀԲ, ԱՄՆ ՄՁԳ, ԱՄՆ ԳԴ), առաջատար հնդկական և միջազգային գյուղատնտեսական և բիզնեսի կրթական հաստատությունների ներկայացուցիչներ և այլք: Ինչպես և սպասվում էր, մենք շահագրգիռ քննարկումներ ունեցանք և գիտական հետազոտությունների բնագավառում նոր գործարար կապեր հաստատեցինք ԱՅԿՄԿ-ի և ԱՌԿ-ի համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար մեր ուսանողներն ու ընթերցողները կարող են այցելել <http://www.globalfoodchainpartnerships.org/India/program.html> կայքը:



conference. The conference brought together leaders from domestic and multi-national agri-food companies, agribusiness supply chain facilitators, government and public sector agencies, international development agencies like WB, USAID, USDA, leading Indian and international agricultural and business academic institutions and others. Unsurprisingly, we had interesting discussions and established new research contacts for ICARE and the ATC.

For more information, our students and other readers can visit: <http://www.globalfoodchainpartnerships.org/India/program.html>

Մայքլը, Սոհեյլը և Բոբին դասեր են առնում ԱՌԼԿ-ում

Մայքլ ԱԶԱՐԲՈԴ
ԱՌԼԿ-ի ազատ ունկնդիր

Իմ եղբայր Բոբին և իմ ընկեր Սոհեյլ Շայեղի հետ միասին ես մասնակցում եմ ԱՌԼԿ-ի քաղաքագիտության և գլոբալ մատակարարման շղթայի կառավարման դասընթացներին: Եղբայրս ու ես ԱՄՆ Միներսոտայի նահանգից ենք, իսկ մեր ընկերը՝ Իրանից: Սոհեյլը Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանող է: Նույն համալսարանում դասավանդում է իմ հայրը՝ Սայրջու Ազարբոդը: Մայրս, Շերիլը, նույնպես գտնվում է մեզ հետ Հայաստանում:

Ազրոբիզնեսի ուսուցման կենտրոնում ես այնպիսի փորձառություն եմ ձեռք բերում, որն ինձ ուղեկցելու է ամբողջ կյանքի ընթացքում: Հրաշալի մթնոլորտի, ինձ հաճելիորեն շրջապատող ուսանողների, բարեկիրթ, միևնույն ժամանակ բարեկամաբար տրամադրված դասախոսների մասին իմ հիշողությունները մշտապես կմնան հոգուս մեջ՝ ուր էլ գնալու լինեմ:

Համոզված եմ, որ երբ վերադառնամ տուն՝ Միացյալ Նահանգներ, ինձ հարցնելու են՝ «Հայաստանի հետ կապված ամենալավ հիշողությունը ո՞րն է»: Առանց երկմտելու, ես կպատասխանեմ, որ մոտավորապես իմ տարիքի ուսանողների հետ շփումները, այն էլ՝ ազգային մեծ մշակույթներ կրող ու ուրիշների նկատմամբ մեծագույն հարգանք տածող հայ և վրացի ուսանողների միջավայրում, այնպիսի մի նվաճում է, որ երանի յուրաքանչյուր անձ կարողանար գոնե մեկ անգամ մնան փորձառություն ունենալ:

Ես շնորհակալ եմ իմ բազմաթիվ ընկերներին, ում հանդիպեցի վերջին ամիսների ընթացքում: Բայց նախևառաջ ես շնորհակալ եմ իմ դասախոսներին՝ օրիորդ Դիանա Հակոբյանին և պարոն Աղասի Մանուկյանին, ովքեր այնքան հեշտությամբ կարողանում են ստեղծել սիրալիք ու հոգատար մթնոլորտ, որն իր հերթին ինձ հնարավորություն է տալիս մյուս ուսանողների հետ հաճելի հաղորդակցության մեջ մտնելու: Այս մթնոլորտն է նաև, որ, կրթության բարձր որակի հետ միասին, հրապուրում է ուսանողներին դեպի Ազրոբիզնեսի ուսուցման կենտրոն:

Այս ամենի համար ես պարտական եմ թե իմ ընկերներին և թե իմ դասախոսներին: Նրանք ինձ երբևէ հանդիպած ամենահոգատար ու բարի մարդիկ են: Սակայն ամենից շատ ես պարտական եմ դոկտ. Դանին, ով ինձ այնպիսի հնարավորություն ընձեռեց, որի մասին միայն երազել կարող էի: ○

Michael, Soheil and Bobby Taking Classes at ATC

By Michael AZARBOD
ATC Auditing Student



I am taking Political Science and Global Supply Chain Management courses at the ATC together with my brother Bobby (we are from Minnesota in the Northern part of the United States) and my friend Soheil Shayegh who is from Iran. Soheil is a student of the American University of Armenia, where my father Cyros Azarbod teaches. My mother Cheryl is also with us here in Armenia.


My experience at the ATC is one which will last a lifetime. The wonderful atmosphere, the well-rounded students and the highly educated and yet fun teachers will be carried inside me wherever I go. I am sure that when I arrive back in the United States, I will be asked, "What was the best part about Armenia?" I will safely reply, without hesitation, that interacting with the students near my age in an environment so rich of national culture and personal respect from Armenian and Georgian students, was a feat in which I wish every person had the chance to experience. As to meeting this feat for me, I have to thank many of the friends I've met along the way.

First of all, I'd like to thank the teachers, Ms. Diana Hakobyan and Dr. Agassy Manoukian. They're some of the most caring people I've ever met, and I owe them greatly. They are easily able to create a loving and caring atmosphere, which in turn allows me to interact with the students. This brings in the students. However, above all I owe Dr. Dunn. He allowed me the opportunity to achieve all one could dream for. ○

Այցելեք մեր կայք

Գործարկվել են ԱՀԿՄԿ հիմնադրամի և Ազրոբիզնեսի ուսուցման կենտրոնի www.icare.am և www.icare.am/atc կայքերը, որտեղ զետեղված են հիմնադրամի և ԱՌԼԿ-ի կառուցվածքը, ընթացիկ իրադարձությունները, ԱՌԼԿ-ի տեղեկագրերի համարները և այլ տեղեկություններ: Սա ԱՀԿՄԿ աշխատակազմի և ԱՌԼԿ-ի դասախոսների ու ուսանողների համատեղ ջանքերի արդյունքն է: Կայքի ձևավորման հեղինակը ԱՌԼԿ-ի չորրորդ կուրսի ուսանող Արարատ Մկրտչյանն է: Կայքի բովանդակությունը շարունակաբար թարմացվելու է՝ ներառելով նոր տեղեկատվություն և լուսանկարներ: ○

ICARE/ATC Website Launched



We have launched www.icare.am and www.icare.am/atc websites reflecting the structure, personnel, current activities, ATC Newsletter issues, and other information. This is a result of joint efforts by the ATC teachers and students and the ICARE team. Ararat Mkrtychyan, an ATC 4th year student has designed the website. We will be improving the content developed by adding more and more information and illustrations in future. We would welcome any comments. ○

ԱՈՒԿ-ը սկսում է դիմումների ընդունումը

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնն ապրիլի 2-ից սկսում է փաստաթղթերի ընդունումը 2007-2008 ուսումնական տարվա ընդունելության համար: Ստորև ներկայացվում են ընդունելության գործընթացի ժամանակացույցն ու վերջնաժամկետները:

2007թ. մայիսի 1, ժ. 17:00 – ընդունելության փաստաթղթերի ամբողջ փաթեթի հանձնման վերջնաժամկետ

2007թ. մայիսի 7, ժ. 15:00 - գրավոր տեստի հանձնում անգլերենից, տնտեսագիտության հիմունքներից և մաթեմատիկայից (սենյակի համարը կհայտարարվի լրացուցիչ)

2007թ. մայիսի 15-18 - բանավոր հարցազրույց (ամսաթվերն ու ժամերը կհայտարարվեն լրացուցիչ)

2007թ. մայիսի 25 – ընդունող հանձնաժողովի որոշման հրապարակումը

2007թ. հունիսի 8, ժ. 15:00 – կողմնորոշման հանդիպում ընդունվածների համար

2007թ., հունիսի 11 – երկամսյա նախապատրաստական ծրագրի մեկնարկը

Ընդունելության ընթացակարգի վերաբերյալ մանրամասներին կարող եք ծանոթանալ մեր կայքում՝ www.icare.am/atc հասցեով, "Admissions" բաժնում:



ATC Starting Collections of Applications

On April 2, Monday, the Agribusiness Teaching Center is starting collecting application documents for admission to the ATC for the 2007-2008 academic year. Below is the calendar and deadlines for the admission process:

May 1, 2007 17:00 Deadline for submitting all documents of the application package

May 7, 2007 15:00 Test on English, Basic Economics, and Mathematics (room to be announced)

May 15-18, 2007 Interviews (dates and hours to be announced)

May 25, 2007 Admissions Committee decisions to be announced

June 8, 2007 15:00 Orientation

June 11, 2007 Starting Date of the two-month Preparatory Program

Details on admission procedures are available at our website: www.icare.am/atc, under section "Admissions".



Agribusiness Teaching Center, International Center for Agribusiness Research and Education Foundation
 74 Teryan St., Yerevan, Armenia
 In association with USDA FAS, Texas A&M University, and the State Agrarian University of Armenia
 Tel: (37410) 52-28-39, 56-95-70;
 Fax: (37410) 56-62-21 E-mail: info@icare.am
www.icare.am/atc
 2. համչեյ»ե՛Շ ձօթձօՍՅ Կ Ի»Կի հնԿ . օ հ՞Յ Կ, Ի »հՍՅ Կ 74